Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ _____Մ.Մակիչյան
«11 սեպտեմբերի 2020թ.»
(գիտխորհրդի արձ. № 36)

Հյուսիսային համալսարանի միջազգայնացման հայեցակարգ և քաղաքականության ծրագիր

Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) միջազգայնացման հայեցակարգը և քաղաքականության ծրագիրը բխում է Համալսարանի 2020-2025 ռազմավարական ծրագրից, ինչպես նաև Համալսարանի, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող միջազգայնացման գործընթացներում ինտեգրման քաղաքականության առաջնահերթություններից:

Համալսարանի միջազգայնացման առաքելությունը

Ակտիվորեն ինտեգրել Համալսարանը միջազգային կրթական գործընթացներում՝ զուգահեռ զարգացնելով Համալսարանի բոլոր տեսակի իրականացված գործընթացների միջազգայնացումը:

Հյուսիսային համալսարանի միջազգայնացման տեսլականը

Հյուսիսային համալսարանի միջազգայնացման առաքելության իրականացման շնորհիվ Համալսարանի ուսանողները և դասախոսները կունենան ավելի շատ հնարավորություններ մասնակցելու միջազգային ծրագրերի, դասախոսները կլինեն ավելի ինտեգրված միջազգային հետազոտական ծրագրերում, նոր միջազգային կապերի հաստատման և ակտիվ համագործակցության շնորհիվ, կունենան ավելի մեծ քանակի գիտական տպագրություններ միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում:

Նպատակները

1. Համալսարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերի որակի ապահովում՝ միջազգային չափանիշների, Բոլոնիայի գործընթացի դրույթների և Եվրոպական Բարձրագույն կրթական տարածք ինտեգրվելու հիմնական պահանջների լույսի ներքո՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնելու կրթական ծրագրերը Եվրոպական կրթական տարածքում իրականացվող կրթական ծրագրերի հետ;
2. Միջազգային ակադեմիական շարժունության ընդլայնում
3. Օտարերկրյա ուսանողների ներգրավում Համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերում

4. Օտարերկրյա գիտնականների, այդ թվում Հայկական Սփյուռքի հետ համագործակցության ընդլայնում
5. Համալսարանի միջազգային գիտական վարկանիշի բարձրացում՝ միջազգային գիտական միջոցառումների ակտիվ կազմակերպման, մասնակցության, արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում հոդվածների տպագրության միջոցով:
6. Արտաքին կապերի բաժնի աշխատանքների արդիականացում՝ սույն հայեցակարգի նպատակների և առաջնահերթությունների լույսի ներքո:

Ակնկալվող արդյունքներ 2025 թ-ին:

1. Համալսարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերի որակի ապահովում՝ միջազգային չափանիշների, Բոլոնիայի գործընթացի դրույթների և Եվրոպական Բարձրագույն կրթական տարածք ինտեգրվելու հիմնական պահանջների լույսի ներքո՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնելու կրթական ծրագրերը Եվրոպական կրթական տարածքում իրականացվող կրթական ծրագրերի հետ	1. Պարբերաբար իրականացնել համալսարանի բոլոր կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգ: Այդ նպատակով վերապատրաստել Համալսարանի բոլոր ամբիոնի վարիչներին՝ ՄԿԾ-ների արդյունավետ բենչմարքինգ կատարելու ուղղությամբ: 2. Համալսարանի ՊԴԱ կարողությունների արդիականացում՝ օտարեկրյա փորձագետների մասնակցությամբ: 3. Տեղական և միջազգային աշխատաշուկաների ուսումնասիրություն՝ Համալսարանի կրթական ծրագրերում նշված կրթական վերջնարդյունքներն արդիականացնելու և մրցունակ դարձնելու ուղղությամբ
2.Միջազգային ակադեմիական շարժունության ընդլայնում	1. Ընթացակարգի մշակում, ներդնում և կիրառում ուսանողների և ՊԴԱ միջազգային շարժության արդյունավետությունը պարբերաբար ուսումնասիրելու, խնդիրները վերհանելու, գնահատելու և խնդիրների հաղթահարման գործիքակազմ և գործընթացներ իրականացնելու ուղղությամբ; 1. Խթանել և պայմաններ ստեղծել ՊԴԱ-ի օտար լեզուների իմացության բարձրացման

	ուղղությամբ և այդ գործընթացների իրականացման համար Համալսարանի բյուջեից նպատակային ֆինանսական միջոցների տրամադրում, մինչև 2025 թվականն ապահովել բուհի բոլոր աշխատակիցների առնվազն մեկ օտար լեզվի B1 մակարդակի տիրապետում; 2. Մշակել և ներդնել կրկնակի դիպլոմով 1 բակալավրական և 1 մագիստրոսական ծրագիր; 3. Ընդլայնել համալսարանի՝ միջազգային շարժունության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածումը և հասանելիությունը Համալսարանի բոլոր աշխատակիցների համար: 4. Համալսարանի ուսանողների համար ֆակուլտատիվային սկզբունքով կազմակերպել 2 օտար լեզվի ուսուցում/ֆրանսերեն, իսպաներեն և գերմաներեն/:
3.Օտարերկրյա ուսանողների ներգրավում Համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերում	1. Մշակել և ստեղծել առցանց և տպագիր նյութեր՝ Համալսարանի կրթական ծրագրերի վերաբերյալ և դրանք տարածել Համալսարանի կայքի և սոցիալական հարթակների միջոցով: Յուրաքանչյուր կիսամյակ ընտրել Համալսարանի ուսանողներից կամավորականներ, որոնք կգովազդեն համալսարանը և կտարածեն Համալսարանի մասին օտարալեզու տեղեկություն տարբեր միջազգային երիտասարդական հարթակներում 2. Պատրաստել և համալսարանի կայքում ներբեռնել փոքր տեսապատմություններ Համալսարանի բոլոր օտարերկրյա ուսանղների վերաբերյալ և նպաստել այդ նյութերի տարածմանը առցանց կրթագիտական հարթակներում: 3. Պատրսաստել 1 բակալավրական և 1

	մագիստրոսական ծրագրեր, որոնք կիրականացվեն անգլերենով, իսկ յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրում ներդնել առնվազն 1 դասընթացի դասավանդում անգլերենով: 4. Մշակել և առցանց անվճար հիմունքներով իրականացնել կարճաժամկետ վերապատրաստումներ արտասահմանցիների համար, և դրա շրջանակում որպես գովազդային մաս ներկայացնել Համալսարանի կրթական ծրագրերը: 5. Մինչև 2025 թվականը մասնակցել առնվազն մեկ օտարերկրյա ուսանողների ներգրավման առնվազն 1 միջազգային ցուցահանդեսի:
4.Օտարերկրյա գիտնականների, այդ թվում Հայկական Սփյուռքի հետ համագործակցության ընդլայնում	1. Օտարերկրյա և սփյուռքի գիտնականների հետ պատրաստել առնվազն 3 գիտական աշխատանք և 8 [երկուական համալսարանի յուրաքանչյուր ամբիոնի կողմից] գիտական հոդված, որոնք կտպագրվեն միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում 2. Համալսարանում մինչև 2025 թվականն անցկացնել առնվազն 2 միջազգային գիտաժողով:
5.Համալսարանի միջազգային գիտական վարկանիշի բարձրացում՝ միջազգային գիտական միջոցառումների ակտիվ կազմակերպման, մասնակցության, արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում հոդվածների տպագրության միջոցով:	1. Համալսարանի ՊԴԱ- միջազգային պարբերականներում հոդվածների տպագրության խրախուսում Համալսարանի ֆինանսական միջոցներից: 2. Ներբուհական գիտական դրամաշնորհներում արտասահմանյան/սփյուռքի գիտնականների ներգրավում և նպանատիպ առնվազն 3 ծրագրի իրականացում
6.Արտաքին կապերի բաժնի	Համալսարանի արտաքին կապերի բաժնի

աշխատանքների արդիականացում՝ սույն հայեցակարգի նպատակների և առաջնահերթությունների լույսի ներքո:	համար փորձի փոխանակման կազմակերպում ՀՀ առաջատար բուհերում և Էրազմուս+ K1 շարժունության ծրագրի շրջանակում՝ առնվազն 1 եվրոպական լավագույն բուհում և լավագույն փորձի ներդնում Համալսարանում

Հյուսիսային համալսարանի արդյունավետ միջազգայնացման համար 2021-2025 թթ. կարևորվելու է ոչ միայն վարչակազմի, ամբիոնների, այլև յուրաքանչյուր դասախոսի և ուսանողի ներդրումը սույն հայեցակարգում ձևակերպված նպատակներին հասնելու համար, քանի որ միջազգայնացման և արտաքին կապերի ընդլայնման բարձր որակը կազմում է բուհի որակի ապահովման անքակտելի և կարևոր մասը, որն ապահովում է վերջինիս գրավչությունը, ինչպես նաև նպաստում մրցակցային առավելությունները բարձրագույն կրթական ծառայությունների միջազգային շուկայում: